ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №9.

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի բնական գիտությունների ֆակուլտետի խորհրդի

նիստի

02-ը փետրվարի 2015թ.

Նախագահ՝ Մ. Զաքարյան

Քարտուղար՝ Հ. Գասպարյան

Ներկա էին խորհրդի 8 անդամներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. *2014-15թթ. ուստարվա II կիսամյակի դասացուցակների հաստատում:*

   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/
2. *II կիսամյակի դասապրոցեսի նախապատրաստական աշխատանքներ:*

   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/
3. *Գերազանց և ակտիվ ուսանողների կրթական խրախուսում: Գիտական զեկուցումների և ֆակուլտատիվ խմբերի աշխատանքների քննարկում:*

   /զեկ. Մ. Ա. Զաքարյան/

ԼՍԵՑԻՆ- Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկան, խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց, որ ըստ ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանի նախատեսված էր երկու հարց: ՈՒսումնական պրոցեսի արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունից, օրակարգում դրվել է երեք հարց:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Մ. Ա. Զաքարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին զեկուցումով հանդես եկավ խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց ըստ ուսումնական պլանի կազմված 2014-15թթ. ուստարվա II կիսամյակի դասացուցակները: Դասացուցակը կազմվել է «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա» մասնագիտության I և II, «Կիրառական մաթեմատիկա և ֆիզիկա» մասնագիտության III,

«Քարտեզագրություն և կադաստրային գործ» մասնագիտության I կուրսերի համար՝ երկշաբաթյա /համարիչ և հայտարար/գրաֆիկով:

Զեկուցողը նշեց նաև, որ մասնագետ դասախոսների պահանջ չկա, բոլոր պահանջները բավարար են ուսումնական պարապմունքները վերսկսելու համար:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Գ. Վ. Գուլակյանը, Հ. Ա. Քամալյանը: Նրանք համակարծիք էին քննարկված և կազմված դասացուցակին և առաջարկեցին ներկայացնել տնօրենություն հաստատելու:

ՈՐՈՇԵՑԻՆ-Ներկայացնել տնօրինություն հաստատելու 2014-15թթ. ուս.տարվա II կիսամյակի դասացուցակը՝ ըստ մասանգիտությունների:

Օրակարգի երկրորդ հարցի մասին ֆակուլտետի խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը ներկայացրեց 2014-15թթ. ուստարվա II կիսամյակի դասապրոցեսի նախապատրաստական աշխատանքների մասին. ֆակուլտետում պահպանել կարգապահությունը, ուսումնական պարապմունքերը իրականացնել ըստ հաստատված դասացուցակի, ուսանողների, դասախոսների և աշխատակիցների կողմից անհրաժեշտ է շարունակել պատշաճ վերաբերմունք յուրաքանչյուրի կողմից իր պարտականությունների կատարմանը: Նա նշեց նաև, որ ԿՄՖ III կուրսի ուսանողները 02.-28.02.2015թ. ժամանակահատվածում ունեն մանկավարժական պրակտիկա, ղեկավար՝ Մ. Ս. Աթոյան:

ՈՐՈՇԵՑԻՆ-1. Հանձնարարել դեկանատին վերահսկել նշված աշխատանքների իրականացումը:

2. Հանձնարարել դեկանատին մանկավարժական պրակտիկայի ավարտի մասին ղեկավարի հաշվետվությունը ներկայացնել հաջորդ նիստի քննարկմանը. 28.02.2015թ.:

Օրակարգի երրորդ հարցի մասին հանդես եկավ ֆակուլտետի խորհրդի նախագահ Մ. Ա. Զաքարյանը: Նա ներկայացրեց, որ շարունակական է լինելու ֆակուլտետում իրականացվող ֆակուլտատիվ խմբերի պարապմունքները, գիտական զեկուցումների և ընթերցումների կազմակերպումը և անցկացումը: Նա հանձնարարեց ամբիոններին և դասավանդող դասախոսներին ավելի ակտիվացնել ուսանողների մասնակցությունը նշված գործընթացում: Նա անդրադարձավ գերազանց և ակտիվ ուսանողների կրթական խրախուսումների նախաձեռնողական աշխատանքներին. այդ ուղղությամբ տվեց ընդհանուր

հանձնարարական, որ անհրաժեշտ է գերազանց և ակտիվ ուսանողներին ընդգրկել գիտական աշխատանքներում:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ- Հ. Ա. Քամալյանը, Ք. Վ. Օթարյանը: Նրանք նշեցին, որ ըստ մասնագիտությունների ուսանողներից ընդգրկված են գիտական ընթերցումների, զեկուցումների կազմակերպման, անցկացման և այլ աշխատանքերում: Հարկ է նշել, որ ուսանողների շրջանում ցանկացողների թիվը ավելանում է:

ՈՐՈՇԵՑԻՆ-1. Հանձնարարել ամբիոններին շարունակել և ավելացնել գերազանց և ակտիվ ուսանողների շրջանում կրթական խրախուսումների նախաձեռնողական աշխատանքները:

2. Հանձնարարել ամբիոնների վարիչներին արդյունքների մասին ներկայացնել հաջորդ նիստերի քննարկմանը:

ՆԱԽԱԳԱՀ Մ. Ա. ԶԱՔԱՐՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ Հ. Ս. ԳԱՍՊԱՐՅԱՆ